

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ \_\_\_\_\_ Ա.Սոխոյան \_\_\_\_\_

<<\_\_>> \_\_\_\_\_ սեպտեմբեր \_\_\_\_\_ 2022 թ.

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՍԴԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

ՀՀ Շիրակի մարզի Թավշուտի միջն. դպրոց

VIII դասարան

**Մուրադյան Մելինե Հուսիկի**

<<\_2022-2023\_>> ուսումնական տարի

Հաստատված է N2

# ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉ (կրճատումով)

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, ըստ կրթական մակարդակների շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը:

## V. ՄԻԶՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

15. Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են ըստ ուսումնական բնագավառների և հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

2. Կարողություններ և հմտություններ Այս բաղադրիչով տրված կարողությունների և հմտությունների ամբողջությունը սովորողին հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել ստացված գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները, նպաստում է նրա սոցիալականացմանը:

Զափորոշիչներում առանձնակի կարևորվում են ճանաչողության հետևյալ մեթոդները՝ վերլուծում, մասնավորում, համադրում, վերացարկում, անդրադարձում, մակածում (ինդուկցիա), արտածում (դեդուկցիա), ընդհանրացում, կանխատեսում:

1) ճանաչողական, տրամաբանական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է՝ սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ, այդ թվում՝

ա. գիտելիքներ ձեռք բերել՝ զգայության, ընկալման և մտապատկերման միջոցով,

բ. վերլուծել՝ քննարկման, մեկնաբանման, տարանջատման, համեմատության, խմբավորման միջոցով,

գ. մտահանգումներ անել՝ ամբողջացման, հակադրման, բնութագրման, հիմնավորման, ամփոփման, կշռադատման միջոցով, դ. ընդհանրացնել և համադրել՝ վերացարկման, գնահատման, արժևորման, փաստարկման, ապացուցման, կանխատեսման, ծրագրման միջոցով,

ե. հիմնախնդիրը դիտարկել տարբեր տեսանկյուններից, ուսումնասիրել դրա լուծման հնարավոր եղանակները և գտնել լուծումներ,

զ. երևույթների նկատմամբ դրսևորել առողջ հետաքրքրություն և քննադատական մոտեցում,

ը. վերլուծել իրավիճակը և կատարել եզրակացություններ,

ր. ինքնուրույն որոշումներ ընդունել և հիմնավորել,

թ. նպատակներ դնել, մշակել դրանց հասնելու ուղիներ և ծրագրել սեփական գործը.

2) հաղորդակցական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել,

բ. բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել,

գ. ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները (եզբերը), հասկացությունները և արտահայտությունները,

դ. հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները,

ե. օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից և այլն.

3) համագործակցային կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. աշխատել խմբում, միասնական որոշումներ ընդունել և դրանց համար պատասխանատվություն կրել,

բ. սովորել և սովորեցնել,

գ. դրական հարաբերություններ ստեղծել, դրսևորել առողջ մրցակցություն,

դ. սեփական շահը գիտակցելով՝ ճանաչել և ընդունել ուրիշների շահերը,

ե. բախումային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել,

զ. ուսման ընթացքում և աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքները,

է. զերծ մնալ բարոյական չափանիշներին հակասող նախապաշարումներից, կանխակալ մոտեցումներից, ը. իրավիճակները դիտարկել և մեկնաբանել այլոց տեսանկյունից և այլն.

4) ստեղծագործական կարողություններ ենթաբաղադրիչի նպատակ ունի զարգացնելու սովորողի ստեղծագործական ընդունակություններն ու երևակայությունը, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները,

բ. դրսևորել ստեղծագործական երևակայություն,

գ. երևակայել, խորհել և ենթադրություններ անել ապագայի մասին,

դ. ընկալել և ընդունել նյութական և հոգևոր նոր արժեքները.

5) ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները և ըստ այդմ ծավալել ուսումնական, աշխատանքային գործունեություն,

բ. գիտակցել սեփական գործի կարևորությունը, դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորել,

գ. ճիշտ տնօրինել ժամանակը, մշակել և պահպանել աշխատանքի և հանգստի ժամակարգ (ռեժիմ), վերահսկել սեփական վարքը,

դ. խնամել սեփական մարմինը, դրսևորել այն մարզելու կամք,

ե. զբաղվել ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ,

զ. կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, գնահատել սեփական քայլերը և դրանց հետևանքները:

3. Արժեքային համակարգ

Սույն բաղադրիչով նախատեսված համակարգն արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

1) Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա. գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

բ. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

գ. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

դ. գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,

ե. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համարաբարկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

զ. կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,

է. գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,

ը. գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

թ. հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

ժ. անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,

ժա. դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

ժբ. մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:



ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>>, պետական ոչ առևտրային կազմակերպության (կրճատումով)

42. Դասարանի ղեկավարը (դասղեկը)

- ա) դաստիարակչական աշխատանք է կատարում՝ իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ,
  - բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը.
  - գ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,
  - դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործառնությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին
  - ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը,
  - զ) հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը.
  - է) արգելվում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:
71. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

73. Սովորողն իրավունք ունի՝

- ա) անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն,
  - բ) անկախ բնակության վայրից սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման
  - գ) անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.
  - դ) հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.
  - ե) ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները
  - զ) առանց հիմնական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ, թողնելու ուսումը:
74. Հաստատությանն արգելվում է, առանց ծնողների և սովորողների համաձայնության, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:
75. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:
76. Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:
77. Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանած կարգով կարող է հեռացվել հաստատությունից:
78. Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու հաստատության կառավարմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ	2-3
ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	4-9
ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ	10-11
ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ,	
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ	12
ԱՇԽԱՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ,	
ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ և ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ	13
ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ	14
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ,	
ՍՈՑԻԱԼԱՊԵՏ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԱՇԽԱՏՆԵՐԻ ՀԵՏ	15
ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ	16
ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ	17
ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ	18
ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ	19
ՆՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	20



# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)** - դասարանում սովորում են հինգ աշակերտ, բոլորը տղա են: Երկուսը գերազանց, մյուսները միջին և բավարար առաջադիմությամբ: Բոլորն էլ մեծացել և դաստիարակվել են առողջ և ապահով ընտանիքներում: Աշակերտները ցուցաբերել են տարբեր կարողություններ, ընդհունակություններ և հմտություններ: Կան աշակերտներ, իհարկե, որոնք ունեն թույլ կարողություններ: Դասարանում առկա է առողջ մթնոլորտ:

1. **Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում**: Դաստիարակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչ է: Լիարժեք արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է ձևավորել կոլեկտիվ, ձևավորել առողջ ապրելու վարքագիծ, ապահովել անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուր անհատականությանը ողջունող ներուժը բացահայտող հոգեբանամանկավարժական միջավայր, պաշտպանել սովորողի շահեր, դասարանում կազմակերպել համակարգված աշխատանք, ձևավորել սովորողների, սովորողների և մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերություններ, ձևավորել սովորողների մոտ արժեքային համակարգ, կազմակերպել ստեղծագործական, հասարակայնամետ գործունեություն:

## 2. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն**՝ Սեր և հարգանք սերմանել հոգևոր արժեքների նկատմամբ, արժևորել քրիստոնեական բարոյականությունը: ներկայացնել քրիստոնեական տոները և ցույց տալ դրանց կարևորությունն ու խորհուրդը:

3.2 **Գեղագիտական դաստիարակություն**: Բնության մեջ, աշխատանքում և կյանքում գեղեցիկի գիտակցում, մարդկանց վարքի գեղեցիկի ըմբռնում: Տարբեր ժողովուրդների կուլտուրայի գործիչների ստեղծագործությունների ուսումնասիրելու պահանջ:

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն**:

Գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, քանակի մասին տեղակայված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթաց է: Հետևաբար մեր առաջնահերթ խնդիրն է աշակերտների մեջ ձևավորել ռազմահայրենասիրական ոգի:

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն**՝ Պատկերացում տալ մարդու կյանքում ֆիզիկական կուլտուրայի դերի մասին, աշխատանքի, ուսման հայրենիքի պաշտպանության նախապատրաստվելու համա: Կարևորել առողջության ամրապնդման անհրաժեշտությունը:

3.5 **Աշխատանքային դաստիարակություն**: Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն: Սերմանել աշխատասիրություն, աշակերտների ուժերով դասարանում ստեղծել ծաղիկների անկյուն և զբաղվել դրանց մշակմամբ:

3.6 **Բնապահպանական դաստիարակություն**: Կարևորել բնության պահպանությունը: Ցույց տալ շրջակա միջավայրի վրա մարդկային կենսոլորտի կայունության պահպանումը, բնական պաշարների խնայողաբար օգտագործումն ու վերարտադրումը:

3.7 **Դպրոց ընտանիք կապը**: Ամուր հիմքերի վրա դնել դպրոց-ընտանիք կապը մասնակցել ծնողկոմիտեի հետ տարվող աշխատանքներին: Հրավիրել ծնողական ժողովներ, քննարկել ընթացիկ հարցեր: Անհրաժեշտության դեպքում կատարել տուն, այցելություններ: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են ապա հաղթանակն ապահովված է:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարողներ
1	Covid-19-ի կանխարգելիչ միջոցառումների իրականացում դասասենյակում:Կազմակերպչական այլ հարցեր:	Դասղեկ
2	Ծնողական ժողովի հրավիրում/օնլայն/:Ծնողկոմիտեի անդամների և նախագահի ընտրություն:	Դասղեկ
3	Զբույց`<< Covid-19-ը և նրանից պաշտպանվելու միջոցները>>թ-ով:	Դասղեկ
4	Զբույց`<<Մաքրությունն`առողջության երաշխիք>>թ-ով:	Դասղեկ
5	Զբույց`<< Մեր երկրի հերոսական անցյալը>>թ-ով:	Դասղեկ
6	Զբույց`<<Ամուր թիկունք,հզոր ճակատ>>թ-ով:	Դասղեկ
7	Ծնողական ժողովի հրավիրում/օնլայն/:Ընթացիկ հարցերի քննարկում:	Դասղեկ
8	Զբույց`<<Հինգ տարի անց>>թ-ով:	Դասղեկ
9	Զբույց`<<Ուժը միասնության մեջ է>>թ-ով:	Դասղեկ
10	Զբույց`<<Իմ մանկությունը խաղաղ երկնքի տակ>>թ-ով:	Դասղեկ
11	Ծնողական ժողովի հրավիրում/օնլայն/:	Դասղեկ
12	Զբույց`<<Խաղաղության մշակույթ>>թ-ով:	Դասղեկ
13	Զբույց`<<Ներողամտություն,թե վրեժխնդրություն>>թ-ով:	Դասղեկ
14	Ծնողական ժողովի հրավիրում/օնլայն/:Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում:	Դասղեկ
15	Զբույց`<<Ժամանակի ճիշտ կառավարում>>թ-ով:	Դասղեկ
16	Զբույց`<<Ինչպես ճիշտ կողմորոշվել բարդ իրավիճակում>>թ-ով:	Դասղեկ
17	Խմբային աշխատանք<<2020թ-ի Արցախյան պատերազմը.ես որպես պատմագիր>>թ-ով:	Դասղեկ
18	Տեղեկատվական զրույց`<<Դեպքեր նշանավոր մարդկանց կյանքից>>թ-ով:	Դասղեկ









28																						
29																						

ԴԱՍԴԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	Դասուղևի անցկացման միջոցառման (դասախոսություն, գրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությանը	ծանոթություն
	Զրույց՝ <<COVID-19-ը և դրանից պաշտպանվելու կանոնները>>	
	Զրույց՝ <<Մաքրությունն առողջության երաշխիք>>	
	Զրույց՝ <<Մեր երկրի հերոսական անցյալը>>	
	Զրույց՝ <<Ամուր թիկունք, հզոր ճակատ>>	
	Զրույց՝ <<Ուժը միասնության մեջ է>>	
	Զրույց՝ <<Իմ մանկությունը խաղաղ երկնքի տակ>>	
	Զրույց՝ <<Խաղաղության մշակույթ>>	
	Զրույց՝ <<Ներողամտություն, թե վրեժխնդրություն>>	
	Զրույց՝ <<Իմ հայրենիքի արյունոտ էջեր>>	
	Զրույց՝ <<Երազանքներ, որոնք իրականանում են>>	
	Զրույց՝ <<Իմ պապերի կորուսյալ եղեմը>>	
	Զրույց՝ <<Ես քեզ հետ եմ իմ Հայաստան...>>	
	Զրույց՝ <<Ինչ դառնալ կյանքում>>	
	Զրույց՝ <<Հայոց բանակ>>թ-ով	
	Զրույց՝ <<Ժամանակի ճիշտ կառավարում>>	
	Զրույց՝ <<Ինչպես կողմնորոշվել բարդ իրավիճակում>>	
	Զրույց՝ <<Արցախյան պատերազմը և ես>>	
	Զրույց՝ <<Դեպքեր նշանավոր մարդկանց կյանքից>>	
	Հիգենիկ հարցեր	
	Զրույց՝ <<Մայրս, աշխարհս, տո՛ղ շնորհավոր>>	
	Զրույց՝ <<Ինձ մոտ ձևավորված վատ սովորություններ>>	
	Զրույց՝ <<Ես էլ քեզ նման>>	
	Զրույց՝ <<Ինչպես չկորցնել հարազատ մարդու վստահությունը>>	
	Զրույց՝ <<Հանճարները սիրո մասին>>	
	Զրույց՝ <<Ով է հոգեպես հարուստ>>	
	Զրույց՝ <<Քչերը գիտեն, որ...>>	
	Հանդիպում հոգեբանի հետ	
	Զրույց՝ <<Լավ է ,երբ... վատ է ,երբ...>>	
	Զրույց՝ <<Պահպանված և չպահպանված հին հայկական ավանդույթներ>>	
	Զրույց՝ <<Մտքեր, որոնք ինձ միշտ տանջում են>>	
	Զրույց՝ <<Անկախությունն ինձ համար>>	
	Զրույց՝ <<Տոները մեր կյանքում>>	
	Զրույց՝ <<Ինչ եմ տանելու այս տարի ինձ հետ դպրոցից>>	
	Զրույց՝ <<Վերջին դաս>>	


**ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ**

Դասալսման օրը	Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
	Ծնողկոմիտեի նախագահի և անդամների ընտրություն	Ընտրվեց նախագահ և անդամներ:	Դասողեկ
	Աշակերտների առաջադիմության հարցը:	Օգնել թերացող աշակերտներին:	Դասողեկ
	Աշակերտների դաստիարակությունը ազգային արժեքներով:	Սերմանել սեր դեպի վեհը,արժանապատիվը,հայրենիքը:	Դասողեկ
	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում:	Հաջորդ կիսամյակաում բարձրացնել առաջադիմության մակարդակը:	Դասողեկ
			Դասողեկ

**ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ**

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը
	1. Ծնողկոմիտեի ընտրություն	Կատարվեց ծնողկոմիտեի ընտրություն.
	2. Դասագրքերի գումարների գանձում	Դասագրքերի գումարների գանձումը կատարել ծնողկոմիտեի կողմից:
	3. Կազմակերպչական հարցեր	Սանիտարահիգիենիկ վիճակի ապահովում, դիմակի անհրաժեշտ էրկիսումը ռեժիմի կազմակերպում
	1. 1-ին կիսամյակի ամփոփում	Ամփոփել 1-ին կիսամյակը՝ ներկայացնելով յուրաքանչյուրի գնահատման արժեքները:
	2. Առաջադիմության խթանում	Աշխատել առաջադիմության բարձրացման վրա, ավելի եռանդուն կամ սանձակցել դասերին
	3. 2-րդ կիսամյակի նախապատրաստում	2-րդ կիսամյակի նախապատրաստում


**ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ**  
Ծնողկոմիտեի կազմը

Նախագահ՝ Քրիստինե Մխեյան  
անդամներ՝ Ն.Ավագյան  
անդամներ՝ Ն.Սուրադյան

**ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ**

<b>Անցկացման օ/ա/տ</b>	<b>Քննարկվող հարցերը</b>	<b>Չրույցի համառոտ բովանդակությունը</b>	
	Դասագրքերի գումարների գանձում	Ինչպես կազմակերպել դասագրքերի գումարների գանձումը	
	Օգնություն զինվորին	Կազմակերպել հանգանակություն զինվորներին օգնելու նպատակով	
	Դասարանական անկյան ստեղծում	Օգնություն դասարանի նկարիչ ծնողներից պատի թերթի ստեղծման համար	
	Պատի թերթի ստեղծում	Օգնություն դասարանի նկարիչ ծնողներից պատի թերթի ստեղծման համար	
	Տյառնընդառաջի սեղանի պատրաստում և փևավորում	Օգնություն ծնողների կողմից Տյառնընդառաջի սեղանի պատրաստման և ձևավորման համար	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻՑ ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)**

Հոդված 11. Կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինքնադրստորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)**

ՀՈՂՎԱԾ 4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

4. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Միջնակարգ կրթություն պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

6. Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

ՀՈՂՎԱԾ 5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական զարգացմանը, նրա անձի որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթական մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (կրճատումով)**

ՀՈՂՎԱԾ 10. Երեխայի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու զաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով: Երեխայի տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

Դավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

ՀՈՂՎԱԾ 11. Երեխայի կրթության իրավունքը

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.

2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.

3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.

4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների, օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը:

ՀՈՂՎԱԾ 20. ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնականության բազայից.

4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ռոտնձություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

7) ազատորեն փնտրելու և մասշտիբորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք:

Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն: Պետական համապատասխան մարմինները մշակում և իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

ՀՈՂՎԱԾ 20. (կրճատումով) Երեխայի հանգստի իրավունքը Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին և միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:

ՀՈՂՎԱԾ 22. Երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք:

Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ու ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի

փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. <<Ուսումնական հաստատության դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր>> մատյանը նախատեսված է դասղեկի կողմից դասարանի հետ բազմակողմանի դաստիարակչական աշխատանքների նպատակամղված գործունեությունն, աշակերտների ուսումնառության զարգացման հիմնական ուղենիշները գիտամանկավարժական տեսանկյունից համակարգելու, նախագծելու համար:

2. Դասղեկը աշխատանքային տարեկան ծրագիրը կազմելիս նպատակահարմար է հաշվի առնել՝

- դաստիարակչական խնդիրների ճշտությունն ու իրատեսությունը,
- Աշակերտների գործունեության կազմակերպման գույակցվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների նախագծվելիք գործընթացներում,
- դասավանդող ուսուցիչների, մյուս մանկավարժների ու աշակերտների, մանկավարժների ու ծնողների միասնականությունը,
- ներդասարանական, ներդպրոցական և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդաշնակ կապը,
- աշակերտների տարիքային, անհատական առանձնահատկությունները, երեխաների (անհատական և ընդհանուր) դաստիարակվածության մակարդակի ու նրանց կյանքի պայմանների իրատևությունը,
- տարեկան պլան-ծրագրի փոխկապվածությունը և համաձայնեցվածությունը ուսումնական հաստատության մյուս ծրագրերի, պլանների հետ:

Դաստիարակչական աշխատանքների հիմնական խնդիրները պետք է չլինեն ոչ չափից դուրս ընդհանուր, ոչ էլ շատ կադապարված, նեղ, այլ անհրաժեշտ է նկատի ունենալ անձի ձևավորման ամբողջականությունը և դաստիարակության յուրահատկությունները՝ տարիքը, սոցիալական շրջապատը:

Մատյանը հնարավորություն է տալիս դասղեկին, ըստ ուսումնական շաբաթների համակարգելու դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դարձնելու ոչ միայն կատարվելիք աշխատանքները, այլև դրանց իրագործման ճշգրիտ ուղիները:

Պլան-ծրագրի բաժինների հաջորդականությունը և սերտ շարունակական կապը թույլ կտա տեսնելու աշակերտների մտավոր կարողությունների աստիճանական զարգացումը և վարքի դրական դրսևորումները, ծնող-դպրոց կապը:

- Դասղեկի տարեկան ծրագիր-պլանը համարվում է ուսումնական հաստատության համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագիր-պլանի բաղկացուցիչը:
- Դասղեկի աշխատանքային ծրագիր-պլանը կազմվում է ուսումնական տարին սկսելուց առաջ և ըստ սահմանված կարգի հաստատվում է տնօրենի կողմից:
- 10-րդ և 11-րդ էջերի, <<ստացավ>> և <<հանձնեց>> սյունակներում համառոտագրել ստացվելիք և հանձնված դասագրքերի պիտանելիության գնահատականները գերազանց –Գ, լավ –Լ, բավարար –Բ, անմխիթար –Ա

Ուսումնական տարին ավարտելուց հետո դասղեկը անցած ծրագիր-պլանի վերլուծության հիման վրա կազմում է նորը: Պլան-ծրագիրը դասղեկը պահպանում է իր մոտ մինչև տվյալ դասարանի ուսումնառության աստիճանի՝ I-IV, V-IX, X-XII, ավարտելը:

ՀՀ ԿԳՆ նախարարի 15.08.2000թ. թիվ 264Մ հրամանի համաձայն  
համարվում է պարտադիր գործածության երաշխավորված փաստաթուղթ

© Կազմող՝ Վ. Միրումյան

© Տպագրության է պատրաստվել Վիամիր ՄՊԸ հրատարակության կողմից, 3000 օրինակ